

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

**ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳԻՐ**



ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) որակի ապահովման վարչության (այսուհետ՝ Վարչություն) 2022 թվականի տարեկան գործունեության ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի «Տեսչական մարմինների որակի ապահովման ստորաբաժանումների կազմակերպման և գործունեության կարգը հաստատելու մասին» N 1358-Ն որոշումը, ինչպես նաև հաշվի առնելով Տեսչական մարմնում Վարչության կողմից ներքին հսկողությամբ բացահայտված խնդիրները և ռիսկերը:

I. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐԸ

1. Ծրագրի նպատակն է Տեսչական մարմնի գործունեության բարելավումը և շարունակական կատարելագործումը:
2. Ծրագրի խնդիրն է Տեսչական մարմնում առկա ռիսկերի բացահայտումը և գնահատումը:

II. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ

3. Տեսչական մարմինն, իր ստեղծումից ի վեր, մասնավորապես՝ վերջին երկու տարիների ընթացքում, գրանցել է գործունեության ակնհայտ դրական առաջընթաց՝ իր ելակետային կարգավիճակի համեմատությամբ:

Ստեղծման և ձևավորման դեռևս վաղ շրջանում, երբ չէր հաստատվել Տեսչական մարմնի գործունեությունը կանոնակարգող օրենսդրական փաթեթը, չկային հաստատված տարեկան գործունեության ծրագիր, ստուգաթերթեր և ստուգումների տարեկան ծրագիր, միաժամանակ առկա չէին գործառույթների իրականացման ներքին կանոնակարգումներ, Տեսչական մարմնի առանձին ստորաբաժանումներ ու

աշխատողներ մատնված էին անգործության, իսկ իրականացվող գործունեությունը կրում էր «քառսային» բնույթ:

Այժմ արդեն օրենսդրական դաշտի զգալի կարգավորման, առանձին մի շարք գործընթացների ներքին կարգավորման, կուտակած փորձի, ինչպես նաև՝ կազմակերպված և համակարգված աշխատանքի արդյունքում Տեսչական մարմինն սկսել է աշխատել իր բնականոն հունով և հարթել է իր նպատակներին հասնելու ուղին՝ կարանտինով պայմանավորված ներկայումս գործելով գերձանրաբեռնված ռեժիմով: Իրականացվում են 2021 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված միջոցառումները և ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումները, չպլանավորված մի շարք աշխատանքներ, որոնց կատարման մասին տեղեկատվությունն, այդ թվում՝ հայտնաբերված խնդիրներն ու ռիսկերն, արտացոլվում են Վարչության կողմից Խորհրդին ներկայացվող եռամսյակային հաշվետվություններում: Մեծ նշանակություն է տրվում միջազգային կառույցների և տեղական մարմինների/կազմակերպությունների հետ համագործակցությանը, կնքվել են տարբեր հուշագրեր, վերահսկվող ոլորտներում իրականացվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ստեղծվել են Տեսչական մարմնի ղեկավարին կից գործող խորհրդակցական խմբեր, որոնց մեջ ընդգրկվել են գիտական, կրթական կազմակերպությունների և տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչներ:

Դրական առաջընթացի հետ մեկտեղ, ինչ խոսք, դեռևս շատ անելիքներ կան, մի շարք հարցեր ենթակա են ներքին կարգավորման, իսկ խնդիրները՝ լուծման:

4. Տեսչական մարմնի գործունեության արձանագրված առաջընթացում իր կարևոր ներդրումն ունի Վարչությունը: Բացահայտելով Տեսչական մարմնում առկա խնդիրները և ռիսկերը, կատարելով համապատասխան վերլուծություններ և Տեսչական մարմնի գործունեությունը բարելավելու առաջարկություններ ներկայացնելով, կանոնակարգվել են մի շարք գործընթացներ, կարգավորվել են առանձին խնդիրներ և նվազեցվել են առկա ռիսկեր:

Օրենսդրության համաձայն հաշվետու լինելով Տեսչական մարմնի կառավարման խորհրդին (այսուհետ՝ Խորհուրդ), Տեսչական մարմնի գործունեության սկզբնական շրջանում աշխատանքային հարցերի վերաբերյալ Խորհրդի նիստեր չկայանալու հանգամանքով պայմանավորված, հնարավորություն չունենալով Խորհրդի հաստատմանը ներկայացնել գործունեության տարեկան ծրագիր, հաշվետվություններ և Տեսչական մարմնի գործունեության բարելավմանն ուղղված առաջարկություններ, Վարչությունն իր գործառույթներն իրականացրել է օրենսդրությամբ սահմանված իր իրավասությունների շրջանակներում՝ ներքին հսկողության աշխատանքների արդյունքները և գործունեության բարելավմանն ուղղված առաջարկությունները ներկայացնելով Տեսչական մարմնի ղեկավարին: Դրանց հիման վրա տեղի են ունեցել քննարկումներ, ղեկավարի կողմից տրվել են բանավոր և գրավոր հանձնարարականներ, ուղարկվել շրջաբերականներ:

5. Վարչության առաջարկությունների հիման վրա մշակվել և հաստատվել են օրենսդրությամբ պահանջվող մի շարք ներքին իրավական ակտեր.

- ներքին կարգապահական կանոններ,

- գործավարության կարգ,

- ստորաբաժանումների կանոնադրություններ,

- բողոքների ընդունման և ընթացք տալու կարգ,

- վարչական վարույթների վերաբերյալ գործերի և դրանց հաշվառման գրանցամատյանների, ինչպես նաև վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանի վարման կարգ ու պայմաններ:

Տեսչական մարմնի գործունեության ընթացքում հայտնաբերված բազմաթիվ խնդիրների և դրանց կարգավորման նպատակով ներկայացված առաջարկությունների հիման վրա Տեսչական մարմնի ղեկավարի համապատասխան հանձնարարականներով կարգավորվել են մի շարք ընթացիկ հարցեր:

6. Վարչության կողմից իրականացվել է Տեսչական մարմնի բոլոր ստորաբաժանումների, այդ թվում՝ ստորաբաժանումների ներսում աշխատողների

ծանրաբեռնվածության ուսումնասիրություն և վերլուծություն, հայտնաբերվել են աշխատանքների համաչափ բաշխման հետ կապված խնդիրներ, որոնք, ըստ առանձին ստորաբաժանումների, քննարկվել են ղեկավար կազմի հետ, ձեռնարկվել են համապատասխան քայլեր: Վերջինիս շրջանակներում բարձրացվել է նաև աշխատողների հաշվետվողականությունը:

7. Տեսչական մարմնի գործունեության սկզբնական շրջանում Վարչության կողմից կազմակերպվել և իրականացվել է ներքին դասընթաց՝ նոր տեսչական համակարգի, գործող օրենսդրության, միջազգային օրենսդրության և լավագույն փորձի, ինչպես նաև ներքին հսկողությամբ հայտնաբերված խնդիրների և դրանց վերացման նպատակով անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ:

Վարչության կողմից հայտնաբերված խնդիրների վերաբերյալ քննարկումները շարունակական բնույթ են կրում: Մինչ Խորհրդի նիստ հրավիրվելը՝ խնդրին արագ լուծում տալու նպատակով, այն ներկայացվում է Տեսչական մարմնի ղեկավարին, տեղի է ունենում քննարկում, առաջարկվում են լուծման տարբերակներ, հաջորդիվ՝ Տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրվում են համապատասխան հանձնարարականներ: Խորհրդին ներկայացված վերլուծությունների, հաշվետվությունների և առաջարկությունների հիման վրա վերջինիս կողմից Տեսչական մարմնի ղեկավարին տրվում են հանձնարարականներ՝ արձանագրված խնդիրները լուծելու նպատակով:

8. Վարչությունը մեծ կարևորություն է տվել և շարունակում է տալ Տեսչական գործունեությունը տնտեսավարող սուբյեկտների համար բեռ չլինելու հանգամանքին: Այս համատեքստում քննարկման առարկա է դարձել Վարչության կողմից հայտնաբերված յուրաքանչյուր դեպք: Արդյունքում՝ Տեսչական մարմնում ընդունված, դեռևս Առողջապահական պետական տեսչությունից ժառանգած անընդունելի գործելաոճը, երբ Տեսչական մարմին ներկայացված յուրաքանչյուր նույնիսկ ամենափոքր հարցով բողոքը հիմք էր դառնում տնտեսավարող սուբյեկտում մեծածավալ և բողոքի հետ բնավ կապ չունեցող հարցերով վերահսկողության, այլևս մնացել է անցյալում:

Վարչության առաջարկությամբ Տեսչական մարմնի ղեկավարի հրամանով կարգավորվել է այդ հարցը՝ յուրաքանչյուր վարչական վարույթ հարուցելու և/կամ զննում իրականացնելու հրամանում ամրագրվում են բացառապես վարչական վարույթ հարուցելու հիմքին առնչվող իրավական ակտերը և դրանց համապատասխան կետերը, այդ շրջանակը կարող է փոփոխվել բացառապես հիմնավորված զեկուցագրի, ներկայացված փաստերի և դրանց հիման վրա հրապարակված Տեսչական մարմնի ղեկավարի առանձին հրամանով:

9. Կադրային ներուժի համաչափ հատկացումն ապահովելու և ֆինանսական չհիմնավորված ծախսերից խուսափելու նպատակով Վարչության ուշադրության կենտրոնում է վերահսկողության համար հատկացված մարդ/օր/ֆինանսական ծախսեր համաչափության հարցը. արձանագրված խնդիրները, այդ թվում՝ կոնկրետ դեպքերը, բարձրաձայնվել են, տրվել են լուծումներ, առանձին դեպքերում տեղի է ունեցել գործուղման համար տրամադրված գումարների հետգանձում:

10. Վարչության կողմից դեռևս 2019-2020թթ. ուսումնասիրվել էր չվճարված տուգանքների նկատմամբ հետևողականության գործընթացը: Արդյունքում հայտնաբերվել էր, որ որոշ չվճարված տուգանքներ գանձման նպատակով չէին ուղարկվել հարկադիր կատարման ծառայություն: Արդյունքների հիման վրա նշանակվել էր ծառայողական քննություն, որի ընթացքում բացահայտվել էր նաև, որ մի շարք խախտումների դեպքում վարչական տույժ տուգանք չէր կիրառվել՝ դրա համար սահմանված ժամկետի սխալ հաշվարկի արդյունքում:

11. Ստուգումների գործընթացի մեկնարկին զուգահեռ, ներքին հսկողությամբ բացահայտվել են գործընթացին առնչվող մի շարք խնդիրներ, որոնք Խորհրդին են ներկայացվել եռամսյակային հաշվետվություններով՝ դրանք լուծելու վերաբերյալ համապատասխան առաջարկություններով: Վերջիններս առնչվում են ինչպես ստուգումների տարեկան ծրագրի մշակմանը, այնպես էլ՝ ստուգումների ողջ գործընթացին՝ հանձնարարագրերի կազմում, հրապարակում, ծանուցում, մուտք տնտեսավարող սուբյեկտ, ստուգման գործընթաց և ավարտ:

12. Վարչության կողմից Տեսչական մարմնի դեմ բերված բողոքների ուսումնասիրությամբ յուրաքանչյուր դեպքում բացահայտվել են բողոքի պատճառները, առկա խնդիրները և ռիսկերը: Վարչության առաջարկությամբ իրականացվել է բողոքների քննարկում, խնդիրների լուծման նպատակով ղեկավարի կողմից ստորաբաժանումներին ուղարկվել է շրջաբերական և տրվել են հանձնարարականներ:

13. Վարչության կողմից ներկայացվել են մի շարք օրենսդրական փոփոխությունների առաջարկներ՝ ներքին հսկողությամբ բացահայտված՝ վերահսկողության առանձին հարցերի կարգավորման, օրենսդրական բացերի գույքագրման, լաբորատոր ծառայությունների գնման, վարչական տույժերի վերանայման և այլ հարցերի վերաբերյալ:

14. Օրենսդրությամբ սահմանված՝ կարգապահական կանոնների պահպանման վիճակի վերաբերյալ ներքին հսկողություն իրականացնելու լիազորության շրջանակներում ևս Վարչության կողմից կատարվել են նշանակալի աշխատանքներ: Ուսումնասիրվել է յուրաքանչյուր ծառայողական քննություն, բացահայտվել են դրանց նշանակման և անցկացման գործընթացի հետ կապված խնդիրներ, ներկայացվել առաջարկներ: Վարչության կողմից ներկայացված առաջարկության արդյունքում, Խորհրդի կողմից տրված հանձնարարականի հիման վրա, Տեսչական մարմնի ղեկավարի հրամանով հաստատվել է ծառայողական քննություն իրականացնելու իրավասություն ունեցող աշխատողների ցանկ՝ ծառայողական քննություններն առավել հանգամանորեն, բազմակողմանի և օբյեկտիվ իրականացնելու նպատակով: Այդպիսով նախատեսվել է լուծել նաև պարբերաբար արձանագրված՝ ծառայողական քննության արդյունքում կազմված եզրակացության և անհամաչափ կարգապահական տույժ կիրառելու խնդիրը:

15. Վարչությունն իր ուրույն, այդ թվում՝ անմիջական մասնակցությունն է ունեցել Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջի ստեղծման և տեղեկատվական սպասարկման աշխատանքներում: Ներկայումս նույնպես ամենօրյա ռեժիմով ուսումնասիրվում է կայքը, մասնավորապես կարևորվում է նոր ընդունված իրավական ակտերը պաշտոնական

կայքէջում հրապարակելու և դրա վերաբերյալ իրազեկող նյութ հրապարակելու մասին առաջարկությունների ներկայացումը:

16. Առանձին խնդիրների կարգավորման նպատակով Վարչության կողմից առաջարկվել է պարզաբանում հայցել համապատասխան լիազոր մարմիններից, որը կատարվել է. տրված պարզաբանումների հիման վրա կարգավորվել են խնդիրները:

17. Կարևորելով վերահսկողության գործընթացում տեսուչների կողմից պատշաճ վարքագծի դրսևորումը տնտեսավարող սուբյեկտում, Վարչության կողմից մշակվել է հարցաթերթ տնտեսավարող սուբյեկտների համար, որտեղ նրանք գնահատում են տեսուչների վարքագիծը, ներկայանալիությունը, արհեստավարժությունը, ցուցաբերված մեթոդական աջակցության և խորհրդատվության որակը, ինչպես նաև՝ ներկայացնում են առաջարկություններ: Հարցաթերթերի արդյունքները վերլուծվել են յուրաքանչյուր եռամսյակի ավարտին և քննարկվել: Հարկ է նշել, որ հարցաթերթի առկայությունն արդեն իսկ կանխարգելում է վերոգրյալ հարցերի բացասական դրսևորումները:

III. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՌԻՍԿԵՐԸ

18. Արձանագրված ձեռքբերումների և առաջընթացի հետ միաժամանակ Տեսչական մարմնում դեռևս բարելավման և կարգավորման անհրաժեշտություն ունեցող մի շարք հարցեր կան: Դրանց գերակշռող մասն ի հայտ է գալիս գործունեության ընթացքում, և հընթացս լուծման քայլեր են ձեռնարկվում:

1) Առաջին և կարևորագույն խնդիրներից է Տեսչական մարմնի, մասնավորապես նոր ընդունվող աշխատողների, մասնագիտական գիտելիքների և ունակությունների շարունակական կատարելագործման անհրաժեշտությունը:

Խնդիրը հատկապես կարևորվում է այն առումով, որ դեռևս չի ավարտվել կադրային համալրման գործընթացը, աշխատանքի են ընդունվում այնպիսի աշխատողներ, որոնք տեսչական ոլորտում աշխատանքային փորձ դեռևս չունեն: Միաժամանակ՝ խնդրահարույց է աշխատողների կողմից նախկինում թույլ տրված բացթողումների և թերացումների կրկնակի դեպքերի արձանագրումը:

Այս համատեքստում, ինչպես արդեն նշվեց, կարևորվում է նաև Տեսչական մարմնի աշխատողների կողմից տնտեսավարող սուբյեկտում վարքագծի կանոնների, ներկայանալիության, ինչպես նաև աշխատանքների թափանցիկության և մեթոդական աջակցություն ցուցաբերելու հարցը: Տնտեսավարող սուբյեկտների կողմից լրացված հարցաթերթերի վերլուծությունը թույլ է տալիս ենթադրելու, որ այդ հարցերում դեռևս բարելավման անհրաժեշտություն կա:

Խնդրի լուծման նպատակով նախատեսվում է Վարչության կողմից ստորաբաժանումների համար ներքին դասընթացների կազմակերպումը՝ գույքագրելով և ներկայացնելով Վարչության կողմից մինչ օրս արձանագրված խնդիրները և առաջարկվող լուծումները:

2) Ներքին հսկողությամբ բացահայտված խնդիրներից է տնտեսավարող սուբյեկտների բազաների ստեղծման և ստուգումների տարեկան ծրագիրը կազմելու համար այդ բազաները համարժեքորեն կիրառելու խնդիրը: Ինչպես նշվել է Խորհրդին ներկայացված հաշվետվություններում, 2021 թվականի 1-ին կիսամյակի գործունեության տվյալների համաձայն, ստուգումների **23,5%** դեպքերում պարզվել էր, որ տնտեսավարող սուբյեկտները չեն իրականացնում այն գործունեությունը, որով որոշվել է նրանց ռիսկայնությունը և որով վերջիններս ներառվել են ստուգումների տարեկան ծրագրում:

Խնդրի լուծման նպատակով Վարչության կողմից ներկայացվել է առաջարկություն, և հաշվի առնելով հարցի կարևորությունը, հաջորդ տարում նույնպես Վարչությունը նախատեսում է ուշադրության կենտրոնում պահել հարցը՝ ուսումնասիրել ստուգումների տարեկան ծրագրում տնտեսավարող սուբյեկտներին ներառելու հիմնավորումները:

Միաժամանակ, քանի որ ընթացիկ տարում արձանագրվել են ստուգումների եռամսյակային պլանավորման խնդիրներ, նախատեսվում է ուսումնասիրության առարկա դարձնել նաև այս հարցը, ինչպես նաև՝ այդ խնդրի վերաբերյալ ներկայացված առաջարկության հիման վրա Խորհրդի կողմից տրված համապատասխան հանձնարարականի կատարումը:

3) Արձանագրված խնդիրներից է նաև հանձնարարագրերի կազմման, հրապարակման, դրանցում ստուգման ենթակա ժամանակահատվածի սահմանման հարցը: Վերջինիս կապակցությամբ նույնպես թեև ներկայացվել է առաջարկություն և Խորհրդի կողմից տրվել է հանձնարարական, սակայն խնդիրը դեռևս շարունակում է մնալ արդիական: Ավելին, այն արտացոլվում է նաև վերստուգումների հանձնարարագրերում:

Հանձնարարագրերի հրապարակման, վերջիններս տնտեսավարող սուբյեկտներին հանձնման և ստուգումը փաստացի սկսելու ժամկետների առումով պարբերաբար արձանագրված խնդրահարույց դեպքերը հաշվի առնելով՝ նախատեսվում է ուսումնասիրության առարկա դարձնել նաև այս հարցը:

4) Ընթացիկ տարում արձանագրվել է, որ առանձին դեպքերում վիճահարույց է վարչական վարույթի կարճումը:

Նշված խնդրի պատճառները և հնարավոր ռիսկերը բացահայտելու և գնահատելու ու համապատասխան քայլեր ձեռնարկելու նպատակով Վարչության 2022 թվականի տարեկան ծրագրով նախատեսվում է ուսումնասիրել բոլոր կարճված վարույթների հիմքերը:

5) Որոշ դեպքերում արձանագրվել է նաև, որ վերահսկողության, հիմնականում՝ վարչական վարույթի արդյունքում կարգադրագրով տրված առաջադրանքների կատարումը պարզվել է շատ ավելի ուշ, քան ներքին ընթացակարգով սահմանված ժամկետն է: Թեև հիմնականում խնդիրը պայմանավորված է եղել COVID-19 համավարակով պայմանավորված ծանրաբեռնվածությամբ, սակայն նախատեսվում է ուսումնասիրել կարգադրագրերի նկատմամբ հետևողականության ընդհանուր գործընթացը՝ միաժամանակ բացառելու նաև առանձին դեպքերում անհետևողականության հնարավոր ռիսկերը:

6) Արձանագրվել են նաև դեպքեր, երբ ճիշտ չեն հաշվարկվել ստուգումը կասեցնելու, վերսկսելու և/կամ երկարաձգելու ժամկետները, վերջինիս արդյունքում որոշ դեպքերում ստուգման փաստացի ժամանակահատվածը գերազանցել է օրենսդրությամբ

սահմանված ժամկետը: Հիմք ընդունելով նշվածը, նախատեսվում է իրականացնել ստուգումը կասեցնելու, վերսկսելու և/կամ երկարաձգելու գործընթացի ընդհանուր ուսումնասիրություն:

7) Որոշակի ռիսկեր են նշմարվել ստորաբաժանումների ներսում աշխատանքների անհամաչափ բաշխման, աշխատողների անհամաչափ ծանրաբեռնվածության առումով: Խնդիրը լիարժեք բացահայտելու նպատակով նախատեսվում է իրականացնել ստորաբաժանումների և դրանց ներսում աշխատողների ծանրաբեռնվածության ուսումնասիրություն: Չի բացառվում, որ ուսումնասիրության արդյունքում կներկայացվի Տեսչական մարմնի հաստիքացուցակի ներքին փոփոխության՝ հաստիքների վերաբաշխման առաջարկ:

IV. ԾՐԱԳՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

19. Ծրագրում առանձին ուղղություններով ներկայացված են որակի ապահովման վարչության կողմից իրականացվող ներքին հսկողության գործառույթների շրջանակներում նախատեսվող միջոցառումները՝ ելնելով որակի ապահովման վարչությանն օրենսդրությամբ վերապահված լիազորություններից, ինչպես նաև՝ հաշվի առնելով Տեսչական մարմնում 2021 թվականի ընթացքում ներքին հսկողությամբ բացահայտված խնդիրները և ռիսկերը (Հավելված 1):

1) Կարգապահական կանոնների պահպանում ուղղության շրջանակներում նախատեսվում է իրականացնել Տեսչական մարմնի աշխատողների կողմից ներքին կարգապահական և էթիկայի կանոնների պահպանման, ինչպես նաև՝ կատարողական կարգապահության նկատմամբ հսկողություն:

Ուղղության շրջանակներում նախատեսվում է ուսումնասիրել բոլոր ծառայողական քննությունների գործերը, կարգապահական տույժերի կիրառման սահմանված ընթացակարգի պահպանումը, կիրառված տույժի համաչափությունը: Նախատեսվում է նաև իրականացնել աշխատաժամանակի ռեժիմի պահպանման վիճակի

ուսումնասիրություն: Դա կկատարվի ինչպես փաստաթղթային, այնպես էլ տարածքային ստորաբաժանումներ այցերի միջոցով, այդ թվում՝ անակնկալ:

Նախատեսվում է նաև ուսումնասիրել աշխատողների ամսական խրախուսումները և դրանց հիմնավորումները:

2) Տեսչական մարմնի դեմ բերված բողոքների նկատմամբ ներքին հսկողության շրջանակներում նախատեսվում է իրականացնել Տեսչական մարմնի, նրա աշխատողների գործողությունների կամ անգործության կամ նրա կողմից ընդունված վարչական ակտերի վերաբերյալ ստացված յուրաքանչյուր բողոքի ուսումնասիրություն և վերլուծություն, բացահայտել բողոքների պատճառները:

3) Տեսչական մարմնի գործունեության արդյունքների նկատմամբ ներքին հսկողությունը նախատեսվում է իրականացնել Տեսչական մարմնի փաստացի գործունեության, մասնավորապես՝ վերահսկողության և կանխարգելիչ գործունեության ուսումնասիրությամբ և վերլուծությամբ:

Այս ուղղության շրջանակներում մասնավորապես նախատեսվում է իրականացնել ուսումնասիրություն սույն Ծրագրի 18-րդ կետով նշված խնդիրների և ռիսկերի վերաբերյալ:

20. Տեսչական մարմնի 2022 թվականի գործունեության տարեկան ծրագրի նկատմամբ ներքին հսկողության շրջանակներում նախատեսվում է իրականացնել այդ ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ապահովումը, սահմանված ժամկետների պահպանումը և արդյունքը, բացահայտել միջոցառումների կատարմանը խոչընդոտող խնդիրները և ռիսկերը:

21. Տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատումը, որպես առանձին միջոցառում, նախատեսվում է իրականացնել ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի N 693-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչներով՝ Տեսչական մարմնի կառավարման խորհրդի կողմից հաստատված կատարողականի գնահատման մեթոդաբանության համաձայն:

22. Հաշվի առնելով Տեսչական մարմնի աշխատողների ծանրաբեռնվածությունը, նախատեսվում է ուսումնասիրել, թե ղեկավար կազմի կողմից ինչպիսի՞ ոչ նյութական միջոցներ են կիրառվում՝ աշխատողներին շահադրդելու և աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Այս համատեքստում նախատեսվում է նաև Վարչության կողմից շնորհանդեսի ներկայացում՝ շահադրդման միջոցների, այդ թվում՝ միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության վերաբերյալ:

V. ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

23. Որակի ապահովման վարչության պետը յուրաքանչյուր եռամսյակ Խորհուրդ է ներկայացնում հաշվետվություն՝ ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում հայտնաբերված խնդիրների և բացահայտված ռիսկերի վերաբերյալ՝ ներկայացնելով առաջարկություններ Տեսչական մարմնի գործունեության արդյունավետության բարձրացման վերաբերյալ (Հավելված 2, Ձև 1):

VI. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

24. Ծրագրով նախատեսված միջոցառումները ներառում են որակի ապահովման վարչության կողմից Տեսչական մարմնում առկա ռիսկերի բացահայտման և գնահատման գործողությունների նկարագրությունը՝ Ծրագրի ուղղությունների շրջանակներում ներկայացված գործառույթների և միջոցառումների իրականացման համար:

25. Ներքին հսկողության ընթացքում ուսումնասիրվում է Տեսչական մարմնի կողմից իր գործունեության ընթացքում «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով սահմանված սկզբունքների պահպանումը:

26. Որակի ապահովման վարչությունն իր գործունեությունն իրականացնում է անկախության և անկողմնակալության սկզբունքներով:

27. Որակի ապահովման վարչության աշխատողները Ծրագրի իրականացման ընթացքում պարտավորվում են գիտակցաբար չմասնակցել անօրինական

գործողությունների, ինչպես նաև չիրապարակել և չտրամադրել գործունեության ընթացքում կամ արդյունքում իրենց հայտնի դարձած տեղեկությունները՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

	ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	ՌԻՍԿԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	ԺԱՄԿԵՏ
I. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ, ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ			
1	Կարգապահական կանոնների պահպանման ուսումնասիրություն և վերլուծություն	<p>Ուսումնասիրվում է՝</p> <p>1) ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջների պահպանման վիճակը, արձանագրված խախտումները, ձեռնարկված միջոցառումները, ծառայողական քննությունների նշանակումը, ընթացքը և արդյունքները:</p> <p>2) աշխատաժամանակի ռեժիմի պահպանում:</p> <p>3) աշխատողների նկատմամբ կիրառվող խրախուսանքի միջոցները, դրանց հիմնավորումները:</p> <p>4) ստորաբաժանումների/աշխատողների կատարողական կարգապահությունը՝ ՀՀ Վարչապետի աշխատակազմից ստացված, ինչպես նաև Տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարականների, հրամանների կատարումը, հաշվետվությունների ժամանակին և պատշաճ ներկայացումը, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում ժամկետների պահպանումը և կատարողական կարգապահությանն առնչվող այլ հարցեր:</p> <p>Բացահայտվում են առկա խնդիրները և դրանցով պայմանավորված ռիսկերը:</p>	<p>յուրաքանչյուր դեպքում</p> <p>յուրաքանչյուր ամիս</p> <p>յուրաքանչյուր ամիս</p> <p>յուրաքանչյուր ամիս</p>
2	Բարեվարքության կանոնների պահպանման ուսումնասիրություն և վերլուծություն	<p>Ուսումնասիրվում է՝</p> <p>1) բարեվարքության կանոնների (այդ թվում՝ նվերներ ընդունելու արգելք, անհամատեղելիության պահանջներ, այլ սահմանափակումներ, շահերի բախում) խախտումների վերաբերյալ ներկայացված բողոքները և արդյունքը:</p> <p>Բացահայտվում են առկա խնդիրները և դրանցով պայմանավորված ռիսկերը:</p>	յուրաքանչյուր դեպքում
II. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԴԵՄ ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ			
3	Տեսչական մարմնի դեմ բերված	Ուսումնասիրվում են Տեսչական մարմնի, նրա ծառայողների գործողությունների կամ	յուրաքանչյուր

	բողոքների ուսումնասիրություն և վերլուծություն	անգործության կամ նրա կողմից ընդունված վարչական ակտերի վերաբերյալ ստացված բողոքները. 1) ուսումնասիրվում են Տեսչական մարմին ներկայացված բողոքները, վարչական (բողոքարկման) վարույթների ընթացքը, ընդունված որոշումները, իրականացվում է բողոքների պատճառների և արդյունքների վերլուծություն, 2) ուսումնասիրվում են դատական կարգով բողոքարկված գործերը, ընդունված որոշումները, իրականացվում է պատճառների և արդյունքների վերլուծություն: Բացահայտվում են առկա խնդիրները և դրանցով պայմանավորված ռիսկերը:	դեպքում՝ որոշման ընդունումից հետո
4	Տեսչական մարմնի աշխատանքների վերաբերյալ ստացված արձագանքների վերլուծություն և գնահատում	Ուսումնասիրվում են Տեսչական մարմնի աշխատանքների վերաբերյալ հանրությունից և տնտեսավարող սուբյեկտների կողմից ստացված արձագանքները (թեժ գծով զանգեր, նամակներ, հրապարակումներ և այլն), ինչպես նաև կատարվում են հարցումներ: Բացահայտվում են առկա խնդիրները և դրանցով պայմանավորված ռիսկերը, ներկայացվում է Տեսչական մարմնի ղեկավարին և կազմակերպվում է քննարկում:	յուրաքանչյուր ամիս
III. ՏԵՄԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ			
5	Տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողական աշխատանքների ուսումնասիրություն և վերլուծություն	Ուսումնասիրվում և վերլուծվում են համապատասխան ստորաբաժանումների կողմից կատարված աշխատանքները նշված գործառույթի շրջանակներում. 1) իրականացված ստուգումների և վարչական վարույթների վերաբերյալ հաշվետվությունների ուսումնասիրություն և վերլուծություն, 2) հաշվետվությունների հավաստիության պարզում՝ այդ թվում՝ առանձին գործերի ուսումնասիրությամբ, 3) օրենսդրությամբ սահմանված ժամկետների պահպանման պարզում: Բացահայտվում են խնդիրները և դրանցով պայմանավորված ռիսկերը:	յուրաքանչյուր ամիս
6	Ստուգումների կասեցման, վերսկսման և երկարաձգման գործընթացների ուսումնասիրություն և վերլուծություն	Ուսումնասիրվում է. 1) ստուգման կասեցման և վերսկսման ժամկետների ճիշտ հաշվարկը, ստուգման ժամանակահատվածի օրենսդրությամբ սահմանված ժամկետների պահպանումը, 2) ստուգման երկարաձգման ժամկետների հաշվարկը, ստուգման օրենսդրությամբ սահմանված ժամկետների պահպանումը: Բացահայտվում են խնդիրները և դրանցով պայմանավորված ռիսկերը:	1-ին եռամսյակ

7	Կարճված վարչական վարույթների կարճման հիմքերի ուսումնասիրություն և վերլուծություն	Ուսումնասիրվում է կարճման որոշումների հիմքերը և կարճման իրավաչափությունը: Բացահայտվում են խնդիրները և դրանցով պայմանավորված ռիսկերը:	2-րդ եռամսյակ
8	Կարգադրագրերի նկատմամբ հետևողականության ուսումնասիրություն և վերլուծություն	Ուսումնասիրվում է. 1) վարչական վարույթի արդյունքում տնտեսավարող սուբյեկտներին տրված կարգադրագրերի նկատմամբ հետևողականությունը, սահմանված ժամկետների պահպանումը: 2) վերստուգումների գործընթացի ապահովումը, սահմանված ժամկետների պահպանումը: Բացահայտվում են խնդիրները և դրանցով պայմանավորված ռիսկերը:	2-րդ եռամսյակ
9	Չվճարված տուգանքները հարկադիր կատարման ուղարկելու գործընթացի ուսումնասիրություն և վերլուծություն	Ուսումնասիրվում է չվճարված տուգանքները հարկադիր կատարման ուղարկելու գործընթացը, վերջինիս համար օրենսդրությամբ սահմանված ժամկետների պահպանումը:	4-րդ եռամսյակ
10	Տեսչական մարմնի գործունեության տարեկան ծրագրի կատարման ուսումնասիրություն և վերլուծություն	Ուսումնասիրվում է ծրագրով նախատեսված միջոցառումների կատարումը, նախատեսված ժամկետների պահպանումը: Բացահայտվում են առկա խնդիրները և դրանցով պայմանավորված ռիսկերը:	Նախատեսված ժամկետների համաձայն
11	Տեսչական մարմնի կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների տարեկան ծրագրի կատարման ուսումնասիրություն և վերլուծություն	Ուսումնասիրվում է Տեսչական մարմնի կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների տարեկան ծրագրով նախատեսված միջոցառումների շրջանակներում կատարված աշխատանքները, ժամկետների պահպանումը:	Նախատեսված ժամկետների համաձայն
12	Պաշտոնական կայքէջի գործարկման և տեղեկատվական սպասարկման ուսումնասիրություն և վերլուծություն	Ուսումնասիրվում է Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջը, կայքէջի թարմացման հաճախականությունը, տեղադրված տեղեկատվության արդիականությունը, Տեսչական մարմնի գործունեության լուսաբանման մակարդակը, «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթներով պահանջվող տեղեկատվության հրապարակումը:	մշտապես
13	Ռիսկի գնահատման, վերլուծությունների և ստուգումների պլանավորման գործընթացների ուսումնասիրություն և վերլուծություն	Ուսումնասիրվում է՝ 1) բազայի թարմացման աշխատանքները, 2) վիճակագրական տվյալների հավաքման և վերլուծությունների գործընթացը, 3) տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի գնահատման աշխատանքների իրականացումը, 4) ստուգումների ընթացիկ պլանավորման և կազմակերպման հետ կապված աշխատանքները (հանձնարարագրերի կազմում, ստուգման շրջանակի և ստուգման ենթակա	յուրաքանչյուր եռամսյակ

		ժամանակահատվածի սահմանում, հանձնարարագրերի հրապարակում, հանձնում ստուգող անձանց և այլն): Բացահայտվում են խնդիրները և դրանցով պայմանավորված ռիսկերը:	
14	Կադրային համալրման, ծառայողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների կատարելագործման գործընթացների ուսումնասիրություն և վերլուծություն	Ուսումնասիրվում է Տեսչական մարմնի կադրային հագեցվածությունը, հաստիքների համալրման գործընթացը, ծառայողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների բարելավմանն ուղղված միջոցառումները, նախատեսված ժամկետները, արդյունքը: Բացահայտվում են բացթողումները, առկա խնդիրները և դրանցով պայմանավորված ռիսկերը:	յուրաքանչյուր եռամսյակ
15	Տեսչական մարմնի գործունեության կատարողականի գնահատում ըստ հաստատված չափորոշիչների	Ուսումնասիրվում է Տեսչական մարմնի կողմից իրականացված աշխատանքները և գնահատվում կատարողականը՝ համաձայն Խորհրդի 2019 թվականի հունիսի 11-ի N 03 որոշմամբ հաստատված մեթոդաբանության:	յուրաքանչյուր եռամսյակ
IV. ԱՅԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ			
16	Ստորաբաժանումների համար ներքին դասընթացների կազմակերպում	Դասընթացի թեմա. 1) Ներքին հսկողությամբ բացահայտված խնդիրներ և ռիսկեր, առաջարկվող լուծումներ: 2) Տեսուչների վարքագիծը տնտեսավարող սուբյեկտներում:	1-2-րդ եռամսյակ՝ 2-3-ական տարածքային կենտրոնում
17	Ստորաբաժանումներում աշխատողների ծանրաբեռնվածության ուսումնասիրություն և վերլուծություն	Ուսումնասիրվում է ստորաբաժանումներում ղեկավարների կողմից աշխատողների միջև աշխատանքների համաչափ բաշխումը և ռոտացիան: Բացահայտվում են խնդիրները և դրանցով պայմանավորված ռիսկերը:	3-րդ եռամսյակ
18	Տեսչական մարմնում ոչ նյութական շահադրդման միջոցների ուսումնասիրություն, շնորհանդեսի ներկայացում:	1) Ուսումնասիրվում է ոչ նյութական շահադրդման միջոցների կիրառումը Տեսչական մարմնում: 2) Ղեկավար կազմի համար ներկայացվում է շնորհանդես:	3-րդ եռամսյակ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

Հաշվետվությամբ ընդգրկված ժամանակահատված՝ 2022 թվականի ----- եռամսյակ

1. Միջոցառում -----

Ուսումնասիրության արդյունք-----

Բացահայտված խնդիրներ և ռիսկեր-----

Առաջարկություններ -----

2. Միջոցառում -----

Ուսումնասիրության արդյունք-----

Բացահայտված խնդիրներ և ռիսկեր-----

Առաջարկություններ -----

3. Միջոցառում -----

Ուսումնասիրության արդյունք-----

Բացահայտված խնդիրներ և ռիսկեր-----

Առաջարկություններ -----

